

Պ. Մ. Պաղասյան

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Արդի դրական հայերենի սահմանական եղանակն ունի երկու ժամանակա՝ կաձև, որոնք մինչև այժմ իրենց ճանաչումը չեն գտել հայ լեզվաբանների կողմից: Այդ ժամանակաձևերը կազմվում են ենթակայական կոչվող գերբայով: Եկատի ունենալով այս ժամանակաձևերի արտահայտած իմաստը, եղանակային այս ձևերը կոչում ենք պոտենցիալ ժամանակներ, իսկ այս ժամանակաձևերը կազմող գերբայը, որը մեր արդի քերականագիտություն կողմից ճանաչված է ենթակայական գերբայ անունով, անվանում ենք պոտենցիալ գերբայ: Պոտենցիալ գերբայով կազմվում են սահմանական եղանակի երկու ժամանակներ՝ պոտենցիալի ապառնի և պոտենցիալի անցյալի ապառնի: Պոտենցիալի ապառնին կազմվում է ~ն՝ գերբայական ածանց ունեցող բայաձևից և օժանդակ բայի ներկայի համապատասխան ձևերից, իսկ անցյալի ապառնին՝ նույն գերբայից և օժանդակ բայի անցյալի համապատասխան ձևերից:

~ն՝ ածանց ունեցող գերբայը նոր չէ, որ մեր քերականագիտություն մեջ ճանաչվել է իբրև գերբայ: Այս գերբայը, որ այժմ ընդունված է անվանել ենթակայական գերբայ, թեև վաղուց իր վրա է հրավիրել շատ քերականների ու լեզվաբանների ուշադրությունը, սակայն իր իսկական էությունը պարզաբանումը չի գտել և ոչ մեկի կողմից: Հայերենի գերբայների հատուկ քննությունն է նվիրված դոցենտ Աշոտ Արարատյանի «Հայերենի գերբայները և նրանց ձևարանական նշանակությունը» արժեքավոր ուսումնասիրությունը, որտեղ քննությունն է ենթարկված նաև այս գերբայը, սակայն այստեղ էլ հեղինակը վերջնականապես չի հասնում այդ գերբայի էության բացահայտմանը:

Հայ քերականության պատմության մեջ¹ առաջին անգամ լատինարան քերականները (Թիվոյա, Կղեմեո Գալանոս, Հովհ. Հովով և այլն) լատիներենի օրինակով «ընդունելությունը» տարբերակեցին ըստ ժամանակների: Քննվող գերբայը նրանք անվանեցին «ընդունելություն ներկայ» (participium praesentis): Հաջորդ ժամանակների քերականները (օրինակ՝ Ս. Ջուղայեցին, Բ. Դպիրը և այլն) նույն ձևով այդ բայաձևը համարում են ընդունելության ներկա: Ավելի ուշ Պալասյանը և այնուհետև Հ. Թումանյանը կոչում են ներկա գերբայ: Այսպես, այն համարում է սոսկ «ընդունելություն»: Գ. Ավետիքյանը թեև «հիմնական սովորությունը բռնելով» այն քննում է իբրև «ներկա գերբայ» (ընդունելություն), սակայն նրա մեջ ներկա ժամանակի իմաստ չի տեսնում: Ընդհակառակը, նա այն հաստատ համոզմունքն է հայտնում, որ ~ող (օղ) ածանցով կազմված բառերը, ածականներ են (մեծ մասամբ) և գոյականներ: Արսեն Բադրատունին քննվող բայաձևը հանել է գերբայների շարքից և գրել

¹ Այս գերբայի ըմբռնման պատմությունը տես դոց. Աշ. Արարատյանի հիշյալ աշխատության մեջ (էջ 224—226):

² Գ. Ավետիքյան. Քերականություն հայկական, 1815, էջ՝ 230, 232, 295, 296, 297, 298:

բալադականների շարքը: Այս վերջին տեսակետը պաշտպանել են մի քանի քերականներ, որոնց թվում և 'Իսղրաշյանը:

Պրոֆ. Մանուկ Աբեղյանը իր «Աշխարհաբարի քերականություն» աշխատության մեջ քննադատում է նրանց, ովքեր այո գերբայը համարում են ներկա գերբայ և, ելնելով այս գերբայի շարահյուսական մեկ կիրառությունից, այն անվանում է ենթակայական դերբայ: Նա գրում է. «Ենթակայական գերբայը քերականները դնում են իբրև ենթակայ դերբայ. բայց այս գերբայը կարող է բոլոր ժամանակների իմաստով ևս բանել և յաճախ ժամանակի ոչ մի որոշ իմաստ չի ցույց տալիս, այլ այնպիսի եղելություն, որ միշտ, ամեն ժամանակ կարող է լինել» (Մ. Աբ., Աշխ. քերակ., 1906, էջ 102):

Ենթակայական գերբայ անվանումը շարունակում է գործածվել Աբեղյանից հետո էլ՝ մինչև այսօր, թեև այժմ այլ է նրա ըմբռնումը: Պահպանելով այդ անվանումը քննվող բայաձևի համար, պրոֆ. Գ. Սևակը ենթակայական գերբայը սահմանում է ոչ թե նրա շարահյուսական կիրառությունը, այլ բառի իմաստալիքն կողմը, խոսքի—մասային հատկանիշները նկատի ունենալով: «Ենթակայական գերբայը,—գրում է նա,—ցույց է տալիս գործողություն ընթացքի մեջ գտնվող, եղող առարկա, օրինակ՝ վազող (նա, ով վազում է), ընթերցող (նա, ով ընթերցում է, կարդում է), փնտրող (նա, ով որոնում է, փնտրում է) և այլն:

Իր այս իմաստով ենթակայական գերբայը բավականին հեռացած է բայից և կարող էր նույնիսկ գոյական կամ ածական համարվել, եթե չլինեին նրա բայական հիմնական հատկանիշները, այն է՝ բայիմաստը, սեռը և խնդրառությունը»³

Այս մեջբերումը վկայում է այն մասին, որ պրոֆ. Սևակն էլ չի ընդունում -ՈՂ ածանց ունեցող գերբայով կազմվող եղանակային ձևերի գոյությունը:

Պրոֆ. Ար. Լարիբյանի՝ այս գերբայի ըմբռնումը պրոֆ. Գ. Սևակի ըմբռնումից տարբերվում է միայն նրանով, որ այս գերբայը սահմանելիս խոսափում է առարկա բառի գործածելուց: «Ենթակայական գերբայը, —գրում է նա,— ցույց է տալիս որևէ գործողություն կատարողը»⁴ Որ իսկապես նա էլ գերբայի ոչ բայական կիրառությունից ելնելով է տալիս իր սահմանումը, երևում է նրանից, թե նախադասության մեջ ինչ կիրառություններ է վերագրում այս գերբային: «Ենթակայական գերբայը, —գրում է նա,— նախադասության մեջ գործ էածվում որպես ենթակա, որպես լրացում և որպես ստորոգյալ կազմող բառ (ևս, ևս, է... բայի օգնություն)»⁵ Պրոֆ. Ար. Լարիբյանը ևս չի ընդունում -ՈՂ ածանց ունեցող գերբայով կազմվող եղանակային ձևերի գոյությունը: «Ենթակայական գերբայը, —գրում է նա,— յիմավոր ձևեր չի կազմում»⁶:

Քննվող բայաձևի մասին նախորդ տեսակետներից տարբեր տեսակետ է հայտնում դոց. Աշ. Աբրահամյանն իր վերոհիշյալ աշխատության մեջ: Նա արդարացիորեն քննադատում է մեր նորմատիվ ու գիտական քերականություն

³ Գ. Սևակ, Ժամանակից հայոց լեզվի դասընթաց, 1955, էջ 301:

⁴ Ար. Լարիբյան, Հայոց լեզու, դասագիրք V—VI դասարանների համար, 1959, էջ 176:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 177:

մեջ այս դերբայի ըմբռնումը այն բանի համար, որ նրա սահմանումը վերջ ի վերջո հիմնված է դերբայի գոյականական կիրառության վրա:

Ճնախ նշենք,—գրում է դոց. Ա. Աբրահամյանը,—որ այդօրինակ սահմանումը բխում է այս դերբայի այն յուրահատկությունից, որ այս դերբայը կարող է դրսևորել միաժամանակ և գործողությունը և գործողը: Բայց այս լինում է այն դեպքում, երբ դերբայը վերցվում է գոյականի առումով: Օրինակ՝ «Ժողովին նախագահողը դիմեց ժողովականներին» նախագասություն մեջ «նախագահողը» ենթակայական դերբայը ցույց է տալիս և նախագասության ենթական, և նրա երկրորդական գործողությունը (նախագահելը), բայց այստեղ ենթակա-առարկան ցույց է տրվում առանց տարբերակման (կոնկրետ ով է նախագահում՝ հայտնի չէ): Այս դեպքում «նախագահող» ենթակայական դերբայը ժամանակավորապես գոյականացվել է, վերցվել է գոյականի առումով, իսկ առանց դրան այն չէր կարող ցույց տալ այդ նույն գործողությունը կատարող առարկան: Օրինակ՝ «Ժողովին նախագահող ընկ. Գրիգորյանը դիմեց ժողովականներին», նախագասության մեջ, «նախագահող» ենթակայական դերբայը վերցված է իր իսկ բնական դրույթամբ և հենց այդ պատճառով էլ ցույց չի տալիս նախագահելու գործողությունը կատարող առարկան, այլ արտահայտում է նրա բայական հատկանիշը, նրա երկրորդական գործողությունը: Վերոհիշյալ սահմանումը համապատասխան է մեր կողմից այստեղ բերված առաջին օրինակին, բայց դա ենթակայական դերբայի բնական գոյը չէ: Ուստի երբայական դերբայը որոշելիս չպետք է ելնել նրա գոյական առումից: Մեր կողմից բերված երկրորդ նախագասության մեջ ենթակայական դերբայն արհեստականորեն գոյականացված չէ, այլ վերցված է իր բնական դրույթամբ: Այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե գործողությունը կատարող առարկայի, այլ գործողության հետ միասին՝ այդ գործողությունը կատարող լինելու զաղափարի հետ, ուստի այդ դերբայը որոշելիս պետք է ելնելու ընդունել այս հանգամանքը՝:

Հեղինակի հետ կարելի է համաձայնել այն հարցում, որ, իսկապես, դերբայը սահմանելիս չպետք է ելնել նրա գոյականական կիրառությունից: Սակայն չի կարելի համաձայնել նրա մյուս մաքին: Դերբայը սահմանելիս, եթե չըպետք է ելնել նրա գոյականական կիրառությունից, ապա հավասարապես չպետք է ելնել նաև նրա ածականական կիրառությունից: Ուստի մեզ համար մնում է անհասկանալի, թե ինչու ընկ. Աբրահամյանը կարծում է, որ իր բերած երկրորդ օրինակում («Ժողովին նախագահող ընկ. Գրիգորյանը դիմեց ժողովականներին») «նախագահողը» «վերցված է իր բնական դրույթամբ»: Մի՞թե պարզ չէ, որ այդ ոչ թե դերբայի բնական դրույթունն է, այլ պարզապես դերբայի ածականական կիրառությունը:

Եթե հայ լեզվաբաններից ոմանք - ՈՂ ածանց ունեցող դերբայը սահմանելիս, ինչպես տեսանք, ելնում էին նրա գոյականական շարաչափական կիրառությունից, ապա ընկ. Աբրահամյանն առաջարկում է հաշվի առնել այս դերբայի ածականական շարաչափական կիրառությունը: Բերելով այնպիսի օրինակներ, ինչպես՝ «Սովետական ժողովուրդը պալքարող ու հաղթող ժողովուրդ է», «Ինքնավար թուրք մեքենա է» նախագասությունները, նա այնու-

⁷ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, 1953, 126-127:

հետև գրում է. «Առաջին նախադասություն մեջ պայքարողը ու ճշգրիտ դերրալները արտահայտում են ժողովրդի ունակությունն ու կարողությունը պայքարելու և հաղթելու գործում, իսկ երկրորդ նախադասության մեջ թուշողը դերրալը ցույց է տալիս ինքնաթիռի թռչելու ունակությունը»:

Ուստի նկատի ունենալով կարելի է տալ ենթակայական դերրալի այսպիսի մոտավոր սահմանում՝ ենթակայական դերրալը ցույց է տալիս գործող կամ եղող լինելու կամ գործողության կատարման համար ունակ լինելու բայական գաղափար առանց առարկայանալու»⁸:

Ինչպես արդեն տալեց, համաձայն չլինելով դերրալի այս սահմանմանը, որը տալիս հաշվի է առնվում դերրալի գոյականական շարահյուսական կիրառությունը, այսինքն՝ անվանական կիրառությունը, ինքը, սակայն, այն սահմանում է հենց նույն սկզբունքով, այս անգամ հիմք ընդունելով դերրալի մի այլ անվանական կիրառություն՝ ածականական կիրառությունը:

Ահա այս տեսակետից մոտենալով հարցին, նաև ճիշտ չի բմբռնում քննվող դերրալը: Նաև այն կարծիքն է պաշտպանում, թե իբրև «...այս դերրալը ընդհանուր առմամբ դիմավոր ձևերի կազմության մեջ հանդես է գալիս, չի մասնակցում բայի՝ ժամանակի մեջ փոփոխվելու գործողությանը՝ խոնարհմանը»⁹:

Հայ լեզվաբաններից միայն պրոֆ. Հր. Աճառյանն է ընդունել -ՈՂ, (-ՈՂ) ածանցով դերրալի մասնակցությունը եղանակային ձևերի կազմությանը, սակայն ոչ թե զրական լեզվում, այլ միայն Համշենի բարբառում: Ըստ Աճառյանի այս բարբառում գրքող իմ, էս, ա, ինք, ին և այլն, գրքող էլ, էլդ, էր, այքը, էյքը, էյնը և այլն. ցույց են տալիս ոչ հաստատ մտադրություն. օրինակ՝ «էջաօղ իմ» նշանակում է կցնամ»¹⁰: Հետևելով պրոֆ. Աճառյանին, պրոֆ. Լարիրյանը Համշենի բարբառի բայական այս ձևերը համարում է սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևեր¹¹:

Մի կողմ թողնելով այն հարցը, թե ինչ իմաստ են արտահայտում վերը բերված բայաձևերը Համշենի բարբառում, նշենք, որ -ՈՂ ածանց ունեցող դերրալով եղանակային ձևերի կազմությունը սովորական երևույթ է ոչ միայն ՈՒՄ ճյուղի բարբառներում, այլև այս բարբառների ազդեցությամբ նաև արդի զրական հայերենում:

ՈՒՄ ճյուղին պատկանող բարբառներում (Արարատյան, Զանգեզուրի, Դարբազի և այլն) -ՈՂ ածանց ունեցող դերրալը եղանակային ձևերի կազմությանը մասնակցող մյուս դերրալների նման կազմում է ժամանակաձևեր, այսինքն ունենում է ստորոգելու հատկանիշ՝ պահպանելով հանդերձ իր բայական իմաստը՝ առանց վերափոխվելու կիրառության, այսինքն՝ առանց գոյականական կամ ածականական կիրառության:

Ինչպես հայտնի է, գոյականը, ածականը և մյուս խոսքի մասերը կարող են գործածվել իբրև ստորոգելական վերադիր: Բայը նախադասության մեջ կարող է գործածվել գոյականի կամ ածականի առումով: Գործածվելով գոյականի կամ ածականի առումով, բայը կրկին կարող է ստորոգվել մաս կազմել:

⁸ Ա. Հ. Արարատյան, Հայերենի դերրալները և նրանց ձևաբանական նշանակությունը, 1953, 227—228:

⁹ Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 394:

¹⁰ Հ. ր. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, 1947, 142—143:

¹¹ Տե՛ս Ա. ր. Դարբազյան, Հայ բարբառագիտություն, 1953, 401—402 էջերը:

դառնալ ստորոգելական վերադիր, սակայն այս դեպքում բայը այլևս բայական կիրառություն մեջ չէ, թեև բայի հիմնական ֆունկցիան է կատարում. բայն այստեղ վերառված կիրառություն մեջ է: Այսպես, օրինակ, հետևյալ նախադասություններում սովորող բառը տարբեր խոսքի մասերի հատուկ կիրառություններ ունի:

«Համալսարանում սովորող Հայկը իմ ընկերն է» նախադասության մեջ սովորող բայաձևը ածականի կիրառություն ունի, իսկ համալսարանում սովորողը պետք է շատ բան գիտենա» նախադասության մեջ՝ դոլականի: «Հայկը սովորող է» (այսինքն ուսանող է) նախադասության մեջ «սովորողը» գոլականական կիրառություն ունի, ուստի և սովորող է. ձևը եղանակային ձև չէ, հետևաբար ստորոգելար բաղադրյալ է: Այս օրինակներում մենք տեսնում ենք -Ո՛ղ, ածանցով գերբայի անվանական շարահյուսական կիրառություններ, որոնք սակայն գերբայի՝ իրեր բայի հիմնական ֆունկցիան չեն¹²: Վերջին օրինակում թեև գերբայը իր շարահյուսական բուն ֆունկցիան է կատարում, սակայն այս դեպքում էլ նա իր բուն գոլի մեջ չէ. նա բայական ֆունկցիան կատարում է իր գոյը փոխած փեճակում, վերառված փեճակում, իրեր անուն:

Արդի հայերենում միայն այս գերբայը չէ, որ հաճախ է գործածվում անվանական կիրառությամբ: Այս տեսակետից քննվող գերբային համարյա չի դիջում հարակատար գերբայը: Գոլականական կիրառությամբ գործածվում է նաև անորոշ գերբայը, որը եղանակային ձևերի կազմությանը չի մասնակցում¹³: Հենց այն բանի պատճառով, որ քննվող գերբայը շատ հաճախ է գործածվում գոլականաբար և ավելի հաճախ՝ ենթակայի պաշտոնում, Արեղյանն այս բայաձևը անվանել է ենթակայական գերբայ: Վերը մենք տեսանք, որ սովետահայ լեզվաբաններից և ոչ մեկը գերբայը սահմանելիս չի ելնում միայն նրա շարահյուսական որևէ մեկ ֆունկցիան հաշվի առնելով: Պրոֆ. Սեվակը, օրինակ, այդ գերբայը ճանաչում է հիմնականում նրա խոսքի-մասային իմաստը նկատի առնելով, իսկ դոց. Աշ. Արրահամյանը՝ այդ գերբայի ածականական կիրառությունը հաշվի առնելով, չանտեսելով միաժամանակ խոսքի-մասային իմաստը: Այնուամենայնիվ, սրանով թեև քննվող գերբայը ճանաչվում է իրեր գերբայ, սակայն էապես մնում է չճանաչված:

-Ո՛ղ, ածանցով գերբայը որոշ չափով իր իմաստը պահպանում է ածականաբար կիրառվելիս, և այս հարցում միանգամայն ճիշտ է նկատում դոց. Աշ. Արրահամյանը գրելով, որ «...ենթակայական գերբայի գրսևորած գործողությունը կարող է լինել ունակություն կամ կարողություն որևէ առարկայի համար»¹⁴: ենթակայական գերբայը ածականաբար գործածվելիս իսկապես արտահայտում է այդ իմաստը: Թաքնված ձևով իրենց մեջ այդ իմաստն արտահայտում են ոչ միայն գոլականաբար գործածվածները, այլև նույնիսկ այն գոլական անունները, որոնք առաջացել են ենթակայական կոչվող գերբայից: Բայց ո՛չ ածականաբար, ո՛չ գոլականաբար գործածված բայաձևերը և ոչ էլ, առավել ևս, այդ գերբայից առաջացած գոլականները չեն արտահայտում այն

¹² Բայի հիմնական ֆունկցիան նախադասության մեջ ստորոգելայ լինելն է: Այդպես էլ ամեն մի խոսքի մաս ունի իր հիմնական ֆունկցիան: Սակայն ինչպես բայը, այնպես էլ մյուս խոսքի մասերը, ունեն նաև երկրորդական ֆունկցիաներ:

¹³ Անցյալում անորոշ գերբայն էլ եղանակային ձևերի կազմությանը մասնակցել է: Այժմ այն մասնակցում է որոշ բարբառներում միայն:

¹⁴ Աշ. Արր., հիշյալ աշխատությունը, էջ 227:

հիմնական իմաստը, որ արտահայտում է քննվող բայաձևը բուն բայական կիրառություն ունենալիս:

Արդ՝ ո՞րն է այդ բայական կիրառությունը և ո՞րն է այդ դերբայի արտահայտած հիմնական իմաստը:

Այժմ դառնանք վերը բերած մեր օրինակներին: «Հայկը սովորող է» (այսինքն ուսանող է) նախադասության մեջ սովորող է. ստորոգյալը բաղադրյալ ստորոգյալ է, իսկ սովորող դերբայը ունի գոյականական կիրառություն: Այժմ ենթադրենք, թե խոսք է գնում Արամի մասին.

— Արամն այս տարի պետք է ընդունվի համալսարան:

— Արամը համալսարան... Բա նա սովորող է, որ ընդունվի սովորելու: Նրանից ի՞նչ սովորող դուրս կգա, նա սովորող չի...

Այս ընդգծված ձևերում դերբայն ունի իր բայական կիրառությունը և կադմում է պարզ ստորոգյալ: Դերբայն այս օրինակներում արտահայտում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը հանդեպ այն սուբյեկտը, որի կատարած գործողությունը խոսողի համար դիտվում է կոնկրետ դեպքում իբրև ապառնի հնարավոր գործողություն, մի գործողություն, որը պոտենցիալ վիճակում գոյություն ունի սուբյեկտի մեջ խոսքի մոմենտին:

Ուսակցի ասածի էությունն այն է, որ ինքը չի հավատում Արամի կարողություններին, որ թերահավատությամբ է լցված հանդեպ Արամի սովորելու ընդունակությունները, տվյալները, կարողությունները, հնարավորությունն ու նույնիսկ նրա մտադրությունը: Այսպես է նաև հետևյալ օրինակում.

— Ես այսօր պիտի գնամ հունձ անելու:

— Տեղդ նստի՛ր... Հունձ անողիս նայիր: Դու հունձ անող ես... Կամ՝ Դու հունձ անող չես:

Ընդգծված բայաձևերը եղանակային ձևեր են և արտահայտում են խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը հանդեպ գործողությունը կատարող սուբյեկտը, բայց առանց սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտելու բուն գործողության նկատմամբ: Նշանակում է, որ այս դերբայով կազմված ժամանակաձևերը սահմանական եղանակի ժամանակաձևեր են:

1. Սահմանական եղանակի պոտենցիալ ժամանակն ունի հետևյալ կազմությունը.

(գ Ր Ի Լ)

գրող ևմ (չևմ)	գրող ենք (չենք)
գրող ևս (չևս)	գրող եք (չեք)
գրող է (չի)	գրող են (չեն)

(կ ա Ր Դ ա Լ)

կարդացող ևմ (չևմ)	կարդացող ենք (չենք)
կարդացող ևս (չևս)	կարդացող եք (չեք)
կարդացող է (չի)	կարդացող են (չեն)

Սահմանական եղանակի անցյալի պոտենցիալ ժամանակն ունի հետևյալ կազմությունը.

(գ Ր Ի Լ)

գրող էի (չէի)	գրող էինք (չէինք)
գրող էիր (չէիր)	գրող էիք (չէիք)
գրող էր (չէր)	գրող էին (չէին)

(կարգալ)

կարդացող էի (չէի)	կարդացող էինք (չէինք)
կարդացող էիր (չէիր)	կարդացող էիք (չէիք)
կարդացող էր (չէր)	կարդացող էին (չէին)

Սահմանական եղանակի պոտենցիալ ժամանակները դրական խոնարհման դեպքում ունեն նույն սովորական շարադասությունը, ինչ որ ունեն մյուս բաղադրյալ ժամանակները, իսկ ժխտական խոնարհման դեպքում ունեն մյուս բաղադրյալ ժամանակներին հակառակ սովորական շարադասություն, այսինքն՝ ժխտական խոնարհման դեպքում էլ սովորական շարադասությամբ նախ դրվում է պոտենցիալ դերբայը և ապա՝ օժանդակ բայի համապատասխան ձևը (նրանք այդ բանն անող չեն և այլն)։

Նկատի ունենալով - ՈՂ ածանց ունեցող դերբայի արտահայտած այս իմաստը, նպատակահարմար ենք գտնում դերբայն անվանել պոտենցիալ դերբայ, իսկ նրանով կազմվող ժամանակաձևերը՝ սահմանական եղանակի պոտենցիալ ավառնի և պոտենցիալ անցյալ։ Պոտենցիալ դերբայը ցույց է տալիս ավառնի մի այնպիսի գործողություն, որն իբրև գործողությունը կատարող սուբյեկտի ունակություն, կարողություն, հնարավորություն կամ մտադրություն խոսողի համար գոյություն ունի պոտենցիալ ձևով։

Արդի խոսակցական գրական լեզվում պոտենցիալ դերբայի բայական կիրառությունը սովորական երևույթ է, սակայն պետք է ասել, որ նախ՝ ոչ բոլոր բայերն են գործածվում պոտենցիալ ժամանակներով և, հրկրորդ՝ գրական լեզվում քիչ գործածական են, իսկ դրա պատճառն այն է, որ այդ ժամանակի փոխարեն հիմնականում գործածում ենք դերբայի իմաստն արտահայտող այլ ձևեր, (հատկապես կարող եմ և անորոշ դերբայի կապակցությունը կամ՝ նա սովորելու ընդունակություն, մտադրություն, հնարավորություն չունի կամ ունի և այլն)։ Սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ գրավոր գրական լեզվում, ինչպես և գեղարվեստական գրականության մեջ շատ սակավ են պատահում պոտենցիալ դերբայով կազմված ժամանակաձևերի կիրառություններ։

Եւր պոտենցիալ դերբայը եզակի թվով և անորոշ առումով գործածվում է իբրև ստորոգելական վերադիր, առաջանում է բաղադրյալ, բայց ձևով այնպիսի ստորոգյալ, որ ոչնչով չի տարբերվում պոտենցիալ դերբայով կազմված ժամանակաձևերից։ Նման դեպքում ձևով միևնույն ստորոգյալներն արտահայտում են միանգամայն տարբեր իմաստներ, ինչպես ասվեց վերը։ Նման դեպքերում հենց նրանց արտահայտած իմաստների օգնությամբ պոտենցիալի ապառնին հեշտությամբ կարելի է տարբերել պոտենցիալ դերբայի՝ իբրև ստորոգելական վերադիր գոյականական կիրառությունից հետևյալ միջոցներով։

ա) Որպեսզի իմանանք, թե պոտենցիալ դերբայը գոյականական, թե բայական գործածություն ունի, պետք է ավելացնել հոգ։ Գոյական անունը հոգ ընդունում է, իսկ նրանով կազմված բաղադրյալ ստորոգյալը հոգ ստանալիս էլ իմաստը չի փոխում։ Հայտնի է, որ արդի հայերենում բայը հոգ չի ստանում, ուստի երբ նման դեպքերում հոգ ենք ավելացնում, ապա փոխվում է ստորոգյալի արտահայտած իմաստը։ Օրինակ. «Սա ընթերցող է» նախադասության մեջ, եթե մեզ այլ խոսքային միջոցներ չեն տրված, անհնար է իմանալ, թե պոտենցիալ դերբայը ինչ առումով է գործածված՝ գոյականական, թե՝

բալական: Եթե մեր միտքը ճիշտ է մնում, երբ հող ենք ավելացնում (սա ընթերցողն է, սա երեկվա ընթերցողն է, սա մեր ընթերցողն է, սա այս գիրքն ընթերցողն է և այլն), ապա նշանակում է, որ պոտենցիալ դերբալը գործածված է գոյականական առումով: Եթե ընդգծված նախադասության մեջ ստորոգյալն արտահայտում է այն միտքը, որ սա կարող է ընթերցել, տվյալներ, նարավորություն, մտադրություն, ցանկություն ունի ընթերցելու, ապա հող ընդունել չի կարող, այլապես միտքը կիտխվի, և այս վերջին իմաստներն արտահայտել չի կարող¹⁵:

բ) Մյուս և լավագույն միջոցը պոտենցիալ դերբալը հոգնակի դարձնելն է: Նույն ձևով՝ եթե կարելի է դերբալը հոգնակի դարձնել առանց փոխելու նրա արտահայտած իմաստը, ապա նշանակում է, որ այն գործածված է գոյականաբար, իսկ եթե հոգնակի դարձնելիս ստորոգյալը փոխում է իր նախկին իմաստը, ապա՝ գործածված է իր բուն՝ բալական առումով, այսինքն՝ ստորոգյալը պոտենցիալ եղանակաձև է: Օրինակ, երբ ասում ենք «Սրանք ընթերցողներն են», ապա «ընթերցող» պոտենցիալ դերբալը գործածված է գոյականաբար, այնինչ պոտենցիալ եղանակաձևում հոգնակի ենթակայի հետ կունենանք միշտ եզակիաձև, քանի որ բալը չունի ՆԵՐ-ով կամ այլ մասնիկով հոգնակիության կառուցողի: Այսպես՝ պոտենցիալի ապառնի ժամանակաձևում կունենանք սրանք բերեցող եկ, այսինքն՝ սրանք կարող են ընթերցել, հնարավորություն, ցանկություն, մտադրություն, ընդունակություն ունեն ընթերցելու:

Բացի այս միջոցները կան ուիշներն էլ՝ Այսպես, օրինակ, շարահյուսական միջոց է լրացումներով որոշելը. եթե քննվող բառաձևն ունի որոշիչ, բացահայտիչ կամ հատկացուցիչ լրացումներ, ապա լրացյալը գոյականական կիրառություն ունի, իսկ եթե այն ունի խնդիր կամ պարագա լրացում, ապա խնդրառող բառը պոտենցիալ դերբալն է բալական կիրառությամբ: Սակայն պետք է ասել՝ միշտ չէ, որ այս վերջին եղանակներով կարելի է լինում հեշտությամբ որոշել դերբալի ճիշտ կիրառությունը, որովհետև դերբալն անվանական կիրառության ժամանակ (այդ թվում և ենթակայական դերբալը) կարող է ունենալ նաև բալական լրացումներ: Բալական արմատով կազմված բալանունները նույնիսկ, որ ավելի շատ անվանական նշանակություն ունեն, քան կարող են դրսևորել դերբալները անվանական կիրառության դեպքում, կարող են ունենալ բալական լրացում (թեև այսպիսի լրացումը թույլ է կապվում, այնուամենայնիվ լրացում է):

Մեր ասածներն ամբողջությամբ վերաբերում են պոտենցիալի անցյալ-ժամանակին:

Սահմանական եղանակի պոտենցիալի անցյալ ժամանակը արտահայտում է խոսողի օբյեկտիվ վերաբերմունքը անցյալում մեկի ունեցած կամ չունեցած պոտենցիալ կարողությունների հնարավորությունների, բնդունակությունների, մտադրության մասին կամ այդ օբյեկտիվ վերաբերմունքի տեսակետից արտահայտում է հարցում գործողությունը կատարող սուբյեկտի անցյալում ունեցած կամ չունեցած պոտենցիալ կարողությունների, հնարավորությունների, բնդունակությունների, մտադրության մասին:

¹⁵ Դրական դրավոր լեզվում գործածական են ն կամ է՝ որոշիչ հոգով այս դերբալի այնպիսի ձևեր, որ ունեն բալական կիրառություն: Ինչպես՝ «նա գնացողը չէ», «նա այս բանն անողն է» և այլն: Նման բառաձևերը, որ մեր լեզվում ունեցել են բուն բալական կիրառություններ, ձևով սակայն դրականական կիրառության անալոգիան են ներկայացնում:

Այսպես, օրինակ, դիցուք մեկին անցյալում մի բան է հանձնարարվել կատարելու, և այժմ իմացվում է, որ չի կարողացել կատարել: Ոոսողը անցյալում գործողությունը կատարող սուբյեկտի մասին կարտահայտվի հետևյալ կերպ:

— Բա նա այդ գործը կատարող էր, որ նրան հանձնարարեցիք: Այս նշանակում է, որ խոսողը այժմ գտնում է, որ սուբյեկտը անցյալում չի ունեցել անհրաժեշտ տվյալներ, կարողություն, ունակություն կամ մտադրություն և այլն այդ անցյալի նկատմամբ մի ապառնի ժամանակում այդ գործը կատարելու համար:

Պետք է ասել, որ անցյալ ժամանակի համար մեծ մասամբ գործածական է ժխտական ձևեր կամ էրոտեմիկ դրականը (ճարտասանական հարց, դրական խոնարհում), որ դարձյալ ժխտական իմաստ ունի: Սա բացատրվում է նրանով, որ անցյալում գործողությունը կատարող սուբյեկտի կարողությունների մասին այժմ կարող է հարց ծագել միայն այն դեպքում, երբ այդ անցյալ գործողությունը ցույց է տվել, որ նա այդ գործողությունը կատարելու համար անհրաժեշտ տվյալներ կամ մտադրություն չի ունեցել: Իսկ եթե սուբյեկտը կատարել է գործողությունը, ապա նրա պոտենցիալ ունակության, հնարավորության, մտադրության կամ կարողության հարցը մեջտեղից վերանում է: Այս դեպքում անցյալի գործողությունը դիտվում է իբրև սոսկ կատարված կամ չկատարված գործողություն, որի մասին հարցնում կամ խոսում ենք սահմանական եղանակի այլ բայաձևերի միջոցով:

Այսքանից պետք է եզրակացնել, որ պոտենցիալ դերբայով կազմված ժամանակաձևերը ևս եղանակային ձևեր են և սահմանական եղանակի ժամանակաձևեր: Այդ դերբայով կազմվում են սահմանական եղանակի պոտենցիալի ապառնի և պոտենցիալի անցյալի ապառնի ժամանակները:

Սահմանական եղանակի պոտենցիալի ապառնի ժամանակը կազմվում է պոտենցիալ դերբայով և օժանդակ բայի ներկա ժամանակաձևերով: Նա արտահայտում է խոսողի օբյեկտիվ վերաբերմունքը սուբյեկտի ապառնի այնպիսի գործողության նկատմամբ, որն իբրև գործողությունը կատարող սուբյեկտի ունակություն, կարողություն, հնարավորություն կամ մտադրություն գոյություն ունի խոսողի համար ներկա մոմենտում պոտենցիալ ձևով կամ արտահայտում է հարցում սուբյեկտի պոտենցիալ ունակության, կարողության, հնարավորության կամ մտադրության մասին:

Սահմանական եղանակի անցյալի պոտենցիալ ժամանակը արտահայտում է խոսողի օբյեկտիվ վերաբերմունքը գործողությունը անցյալում կատարող սուբյեկտի այնպիսի գործողության վերաբերյալ, որը իբրև գործողությունը կատարող սուբյեկտի ունակություն, կարողություն, հնարավորություն կամ մտադրություն գոյություն ունի խոսողի համար խոսքից առաջ ընկած մի անցյալ մոմենտում պոտենցիալ ձևով, կամ օբյեկտիվ վերաբերմունքի տեսակետից արտահայտում է հարցում սուբյեկտի անցյալում ունեցած պոտենցիալ ունակության, կարողության, հնարավորության կամ մտադրության մասին:

Պոտենցիալ դերբայով կազմված եղանակային ձևերով խոսողը միշտ սուբյեկտիվ վերաբերմունք է արտահայտում գործողության սուբյեկտի ներկատմամբ: